ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1248-Ա « 05 » մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի Հ.1491-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Երևանի Աշոտ Ղուլյանի (Բեկորի) անվան ավիամոդելավորման դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Հարություն Մնացականյանի դիմումը՝ Նորքի 1-ին մ/շ, Ջուղայի փողոցի հ.1/1 հասցեում գտնվող գույքի անհատույց օգտագործման պայմանագիր կնքելու մասին:

Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի հ.87-Ա և Երևանի քաղաքապետի 2019 թվականի մայիսի 3-ի հ.1491-Ա որոշումների հիման վրա Նորքի 1-ին մ/շ, Ջուղայի փողոցի հ.1/1 հասցեում Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 13.12.2006թ. հ.2036336 վկայական) տարածքը (722.2քմ շինություն, 2394.0քմ հողամաս) անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացվել է «Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, սակայն կազմակերպության անվամբ գույքի անհատույց օգտագործման իրավունք չի ձևակերպվել:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի հ.404-Ա որոշմամբ «Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվել է «Երևանի Աշոտ Ղուլյանի (Բեկորի) անվան ավիամոդելավորման դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի հ.87-Ա և 2021 թվականի հունիսի 22-ի հ.404-Ա որոշումները.

1. Երևանի քաղաքապետի 2019 թվականի մայիսի 3-ի «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի հ.87-Ա որոշման կատարումն ապահովելու և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով գույքեր ամրացնելու մասին» հ.1491-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում «Արսեն Ամյանին» բառերը փոխարինել «Վահան Խաչատրյանին» բառերով.

2) որոշման անբաժանելի մաս կազմող հավելվածի 10-րդ տողում ««Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն» ՀՈԱԿ» բառերը փոխարինել ««Երևանի Աշոտ Ղուլյանի (Բեկորի) անվան ավիամոդելավորման դպրոց» ՀՈԱԿ» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահավում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ